

9


ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱԼԷՊԻ ԹԵՄԻ

ՀԱՅ ԵՐԿՍԵՌ

ՈՒՍՈՒՅԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

806
226



ԾՐԱԳԻՐ - ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱԼԷՊԻ ԹԵՄԻ

ՀԱՅ ԵՐԿՍ. ՈՒՍՈՒՑՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԵՂՆ

Ա. ՆԴԱՏԱԿ

Ա. — Միութեանն նպատակն է բարեւաւել հայ կրթական մշակներու մտաւոր, բարոյական և տնտեսական վիճակը :

Բ. — Ազգային կրթութիւնը ընդհանրացնել ծնողներու դորձակցութեամբ և խորացնել հասարակութեան հետաքրքրութիւնը, ազգ. դաստիարակչական գործին հանդէպ :

Գ. — Մանկավարժական նորագոյն բմբունումով հոգ տանիլ նոր սերունդի մտաւոր, բարոյական և ֆիզիքական զարգացման :

Բ. ՄԻՋՈՑՆԵՐ

Այս նպատակին հասնելու համար, Միութիւնը կը գիմէ հետեւեալ միջոցներուն .

Կը կազմակերպէ .

1. Մանկավարժական ասուլիսներ .

2. Քննական դասախոսութիւններ
և տիպար դասեր .

3. Ամառնային մանկավարժական
դասախոսութիւններ ընդհանուր ու-
սուցչութեան համար .

4. Ժամանցի հաւաքոյթներ՝ իր
անդամներուն համար .

5. Կը հիմնէ մանկավարժական գը-
րադարան , հայ. և օտար մանկվրժ .
հրատարակութիւններով :

Ուսուցչական Միութիւնը Արհես-
տակցական Միութիւն մըն է . իբրեւ
այդպիսին՝ կը թելադրէ պաշտօնա-
կան մարմիններուն , որ տարեվճար-
ներն ըլլան ուսուցիչ—ուսուցչուհի-
ներու պատրաստութեան , տարինե-
րու ծառայութեան եւ ընտանե-
կան պարագաներու համաձայն :

Գ. ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

Ուսուցչական Միութեան կրնան
անդամակցիլ ,

1. Բարձրագոյն և միջնակարգ

կրթութիւն ստացող ուսուցիչ — ուսուցչութիւնները .

2. Հայ նախակրթարան աւարտողները , որոնք ունին Ուսումնական Խորհուրդի վկայական և կամ առնուազն երեք տարուան բարժօք պաշտօնավարութեան փաստաթուղթ :

3. Թեմի շրջանակներուն մէջ պաշտօնավարող ուսուցիչները , ուղղակի կը յարարերին վարչութեան հետ :

4. Անդամակցութենէ կը դադրին .

ա) Միութիւնը վարկարեկող արարքներու մէջ գտնուողները ,

բ) Նուազագոյն չորս ամիս անդամավճար չվճարողները ,

գ) Միութեան այն անդամները , որոնք ասպարէզէն կը հեռանան :

5. Միութենէն հեռացող և հեռացուող անդամները կը զրկուին Միութեան ընձեռած նիւթական և բարձրական ամէն իրաւունքներէն :

6. Միութիւնը կ'ունենայ պատ-

ւակալ անդամներ , որոնք Միութեան
բարոյական և նիւթական կարեւոր
օժանդակութիւն կը բերեն :

Դ . ԵԿԱՄՈՒՏԻ ԱՆԲԻԻՐՆԵՐ

Միութեան եկամուտի ազրիւրները
կը կազմեն ,

1 . Անդամական վճարներ .

2 . Մուտքի վճարներ .

3 . Նուիրատուութիւններ .

4 . Կողմնակի արդիւնքներ —
թատերական ներկայացումներէ , զը-
րական երեկոյթներէ և վիճակահա-
նութիւններէ յառաջացած դամար-
ներ , և այլն .

5 . Մուտքի վճարն է 25—50
սուր . դէկն . իսկ ամսական անդա-
մավճարն է 2—5 ֆրանք .

6 . Միութեան գրամական հա-
սոյթները , Վարչութեան կողմէ ու-
րոշուած գրամատան մը մէջ պահ
կը դրուին .

7 . Ընթացիկ գործերու համար ,
գանձապահը կրնայ իր մօտ պահել ,

առ առաւելն 25 տւրիական սակի .

8. Միութեան ընդհանուր եկամուտներուն 50 օրը անձեռնմխելի կը մնայ, իսկ մնացած գումարին 25 օրը ընթացիկ գործերու և 25 օրը նպաստի բաժնին կը յատկացուի :

Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

Միութիւնը կ'ունենայ իր կնիքը և հետեւեալ մակագրութեամբ . « Հայ Ուսուցչական Միութիւն Հալէպի թեմին » (հայ. ֆրանս. և արաբերէն)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Միութեան գերագոյն մարմինը ընդհանուր ժողովն է :

Ընդհանուր ժողովը կ'ընտրէ Քննիչ Յանձնախումբ և Վարչութիւն : Քննիչ Յանձնախումբը կաշուէ իր ուղած ատեն, քննութեան ենթարկել Միութեան հաշիւները և տեղեկացնել Ընդհ. ժողովին : Քննիչ Յանձնախումբը պէտք տեսած պարագային կաշուէ իր ընդհ. ժողովի հրաւիրել անդամները :

Ընդհ ժողովը կարող է լրացնել և
փոփոխութեան ենթարկել Մրադիր—
կանսնադիրը, իսկ հիմնական կէտե-
րու փոփոխման համար, միայն տա-
րեկան Ընդհ. ժողովի ձայներու 2/3ը
անհրաժեշտ է: Ընդհ. ժողովը ի
հարկին կը կատարէ պատգամաւորի
և ներկայացուցիչներու ընտրութիւն:
Ընդհ. ժողովը օրինական է, երբ
ներկայ է անդամներու պարզ մեծա-
մասնութիւնը: Եթէ առաջին անգամ
ժողովը օրինական չհամարուի, երկ-
րորդը օրինական է, անկախ ներկա-
ներու թիւէն: Ընտրութիւնները
(Վարչութեան անդամներու, Քննիչ
Յանձնախումբի, ներկայացուցիչնե-
րու և պատգամաւորներու) օրինա-
կան ժողովի ձայներու մեծամասնու-
թեամբ վաւերական է: Ընդհ. ժո-
ղովը կ'ընտրէ Վարչութիւն մը,
բաղկացած հինգ անդամներէ եւ եր-
կու փոխ-անդամներէ: Ընտրու-
թիւնը կը կատարուի գաղտնի: Ընդհ.

Ժողովը կ'ունենայ իր մնայուն քարտուղարը — ընտրուած մէկ տարուան համար — և հերթական նախախազահը : Միութեան անդամներուն 1/3ը կարող են լնդհ. Ժողովի հրաւեր ուղղել Վարչութեան միջոցաւ, օրակարգը նախապէս Վարչութեան ղրկելով :

Հալէպի Թեմին Ուսուցչական Միութիւնը կը հետաքրքրուի Սուրիոյ ընդհ. հայ - կրթական գործով, կը քաջալերէ նման միութիւններու կազմութիւնը տարրեր վայրերու մէջ և կապ կը պահէ նման մարմիններու հետ :

Է. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը Միութեան Գործադիր Մարմինն է :

Վարչութեան գրաւումներն են .

ա) Միութեան գրամներն ու դոյքերը պահպանել և կառավարել .

բ) Միանուադ ևւ պաշրերական նպաստներ տալ, համաձայն լնդհ. .

Ժողովի մշակած հրահանգներուն .

դ) Ընդհ. ժողովներու համար ամէն տեսակ զեկուցումներ կազմել :


դ) Կանոնաւոր հաշուապահութիւն ունենալ եւ տարեկան հաշիւներկայացնել Ընդհ. ժողովին .

ե) Պաշտ. յարաբերութիւն պահել , պետական եւ ազգ. բոլոր հաստատութիւններու եւ ալլ ուսուցչական մշակութային միութիւններու եւ կազմակերպութիւններու հետ :

Վարչութեան անդամները իրենց մէջէն կ'ընտրեն Ատենապետ , Ատենադպիր եւ Գանձապահ :

Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԼՈՒՇՈՒՄ

Միութիւնը լուծուած կը լայտարարուի երբ անդամներու թիւը 15էն պակաս ըլլայ : Լուծման պարագային Միութեան զբառն ու զոյքը կը յանձնուին Սզգ . Իշխանութեան ի պահ , որ պարտաւոր է ապագային վերադարձնել նոր կազմակերպութեան .



7707
908

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0321306